

**ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ**

ԱՍԱՏՐՅԱՆ Ա. Լ.

Իրավունքի գերակայությունն ունի արտաքին ու ներքին դրսևորումներ: Իրավունքի՝ որպես սոցիալական կարգավորիչի գերակայության արտաքին դրսևորումը պայմանավորված է իրավունքի այլ սոցիալական կարգավորիչների (նորմատիվ և անհատական) հետ հարաբերակցությամբ: Դա նշանակում է, որ հասարակության սոցիոնորմատիվ կարգավորման համակարգում (բարոյականություն, կրոնական կանոններ, սովորույթ և այլն) իրավունքն ունի գերակայություն՝ կիրառման առաջնայնություն, բացարձակություն: Մյուսնք հատկություններ են, որոնք մեծ մասամբ հատուկ չեն այլ սոցիալական կարգավորիչներին: Ընդ որում, այդ գերակայությունը երաշխավորված է հարկադրանքի կիրառման սպառնալիքով: Հետևաբար, իրավունքի գերակայությամբ է պայմանավորված նրա համապարտադիրությունը: Իրավունքի նման կերպով հասկացված արտաքին գերակայությունը կանխադրությամբ (աքսիոմատիկ) ճշմարտություն է այսօր: Այդ կանխադրության հիմքերը դրվեցին ուշ միջնադարում աշխարհիկ իրավաբանական աշխարհայացքի ձևավորմամբ, այնուհետև ամրապնդվեց արդի ու ժամանակակից իրավունքի համակարգերի կայացմամբ: Իրավունքի արտաքին գերակայությունը կասկածելի ու վիճելի էր մինչև XVIII դարը, քանի որ նրա հետ համընդհանուր և գերակայող կարգավորիչի հավակնություններ ունեին նաև սոցիալական այլ կարգավորիչներ՝ կրոնը, բարոյականությունը, սովորույթը:

Արդի աշխարհիկ պետական իրավունքի համակարգերի կայացմամբ իրավունքի արտաքին գերակայությունը հաստատվեց, ձեռք բերեց օրենսդրական ամրագրում, վերածվեց դրական իրավունքի սկզբունքի՝ «օրենքի գերակայություն»: Մակայն արդի իրավունքի համակարգերի կայացման արշալույսին հասարակական նոր իրողությունները, իրավական փորձը, իրավագիտության նոր հայեցակարգերի ձևավորումն ու զարգացումը խթանեցին իրավունքի գերակայության սկզբունքի ներքին կողմի ձևավորումը և իմաստավորումը: Իրավունքի գերակայության սկզբունքը այդուհետ ձեռք բերեց նոր իմաստ և որակներ: Այդ հիմնախնդրի տեսական հիմքը «իրավունք» և «օրենք» հասկացությունների իմաստային տարբերություններն էին. տարբերակումը ծնեց իրավունքի և օրենքի հարաբերակցության հիմնահարցը: Մակայն դա չէր նշանակում, որ իրավունքի գերակայությունը կորցրեց իր առաջին՝ արտաքին իմաստը: Այն, որպես իրավական համակարգի կանխադրույթ, առկա է և գործում է օբյեկտիվորեն:

Պատմականորեն պաշտոնական իրավական հայեցակարգերում, որոնք կառուցված էին լայն, իրավաբանական իրավահասկացողության վրա, սկսեցին ուղղակի բանաձևել և ամրագրել իրավունքի գերակայության սկզբունքը: Առաջինը Ֆրանսիայի՝ 1789 թ. օգոստոսի 26-ի «Մարդու և քաղաքացու իրավունքների» հռչակագիրն էր:

Հռչակագրի ներածության մեջ ուղղակիորեն նշվում էր. «Ֆրանսիացի ժողովրդի ներկայացուցիչները, կազմավորելով Ազգային ժողով և ենթադրելով, որ մարդու իրավունքների ունահարումը, մոռացումը և անտեսումը համարվում են հասարակական դժբախտությունների և կառավարությունների թերությունների միակ պատճառը, որոշում ընդունեցին հռչակագրում շարադրել մարդու բնական, անօտարելի և սուրբ իրավունքները: Այդպիսի հռչակագիրը, անփոփոխ մնալով հասարակության բոլոր անդամների հայացքների առջև, մշտապես կհիշեցնի նրանց իրենց իրավունքներն ու պարտականությունները, օրենսդիր և գործադիր իշխանությունների գործողությունները պետք է դառնան ավելի հարգալից, որպեսզի քաղաքացիների հավակնությունները, այսուհետ հենված պարզ և անբեկանելի հիմքերի վրա, ձգտեն սահմանադրության պահպանման և համընդհանուր բարեկեցության»¹:

Հռչակագրի ներածությունը հայտարարում էր իրավունքի գերակայությունը հասարակության, քաղաքական միության (պետության), անհատների համար բնական իրավունքների միջոցով: Այս տեսանկյունից հատկապես կարևոր նշանակություն ունի հռչակագրի այն դրույթը, որն ամրագրում էր. «...այն, ինչն արգելված չէ օրենքով, թույլատրելի է, և ոչ ոք չի կարող հարկադրվել գործողության, որը թելադրված չէ օրենքով»: Այս դրույթը, ըստ էության, երաշխավորում է իրավունքի գերակայությունը իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության ընթացքում՝ կիրառող սուբյեկտներին պարտադրելով այդ գործընթացում ելնել իրավունքի գերակայությունից, այլ ոչ միայն օրենքի, իսկ օրենսդրական կարգավորման համար սահմանվում էր սկզբունք, որն արգելում է հասարակության համար վնասակար արարքները: Պետության և իրավունքի պատմության մեջ ընդունված մոտեցումներից մեկի համաձայն՝ Ֆրանսիայի հռչակագիրը հռչակեց «նոր իրավակարգի իրավական իդեալը՝ ազատությունը և հավասարությունը»²: Այսպիսով, հռչակագիրը նոր աշխարհակարգի և իրավակարգի հիմնարար սկզբունք է հռչակում իրավունքի գերակայությունը՝ ի դեմս բնական իրավական հավասարության և ազատության իդեալի:

Իրավունքի գերակայության սկզբունքի ամրագրման հարցում եղան նաև որոշակի տարաձայնություններ. սահմանադրական կարգավորման մակարդակով մեծ մասամբ ամրագրվեց օրենքի գերակայության սկզբունքը: Քանի որ սահմանադրական համակարգերը կառուցված էին օրենքի և իրավունքի

¹ Хрестоматия по истории государства и права зарубежных стран (Новое и новейшее время). Сост. Н. А. Крашенинникова, М., 1999, с. 50-51.

² Омельченко О. А. Всеобщая история государства и права, т. 2, М., 2005, с. 140.

տարանջատման հայեցակարգի վրա, ընդունվում էին իրավունքի՝ օրենքից անջատ սեփական էությունը (օրինակ՝ բնական իրավունքները), ապա որպես օրենքի՝ իրավունքին համապատասխանությունն ապահովող չափանիշ դրույթներ առաջադրվեցին ու սահմանադրորեն ձևակերպվեցին մարդու իրավունքները և դրանց սկզբունքները: Այս եզրակացությունը հաստատվում է այնպիսի պատմական փաստով, ինչպիսին է սահմանադրական հայեցակարգերի մեծ մասի տուրք տալը բնական իրավունքի տեսությանը: XIX-XX դդ. գրեթե բոլոր ժողովրդավարական իրավական համակարգերի տեսական հիմքը բնական-իրավական գաղափարներն էին:

Պոզիտիվիստական, նորմատիվիստական, լեգիստական իրավահասկացողությունը, տարբերակում չդնելով իրավունքի և օրենքի միջև, կանգ առավ և մնաց «օրենքի գերակայություն» սահմանադրական սկզբունքի վրա: Իրավունքի նման հիմքով կառուցված տեսություններում՝ «իրավունքի գերակայություն» սկզբունքը, պահպանելով իր առաջին՝ արտաքին իմաստը, ձեռք չբերեց երկրորդ՝ զուտ իրավական իմաստը, որովհետև իրավունքի համակարգային կապերում այս հայեցակարգերը նույնացնում էին իրավունքը և օրենքը³: Իրավաբանական իրավահասկացողության վրա կառուցված իրավունքի տեսություններում իրավունքի գերակայության սկզբունքը ձեռք բերեց նոր բովանդակություն, քանի որ սրանք ընդունում էին օրենքից անջատ իրավունքը՝ իր սեփական էությամբ և պահանջներով: Իրավաբանական իրավահասկացողության վրա կառուցված հայեցակարգերում իրավունքի գերակայությունը նշանակում էր առաջին հերթին էության (բովանդակության) գերակայություն ձևի նկատմամբ, հատկապես որ ձևը (դրական իրավական ակտեր), լինելով մարդակերտ երևույթ, կարող էր շեղվել էությունից: Սակայն նույնիսկ այս հստակ մեթոդաբանական հայեցակարգի պայմաններում աշխարհի իրական սահմանադրական պրակտիկայում չունեցանք «իրավունքի գերակայություն» իրավական սկզբունքի հանրաճանաչություն և ուղղակի իրավական ամրագրում: Դրա պատճառներից մեկն այն է, որ պատմականորեն լինելով առաջինը՝ բնական իրավունքի տեսությունն իրավունքի բովանդակության հիմնական մասը համարում էր մարդու բնական իրավունքները, որից և բխում էր բնական իրավունքների գերակայությունը իրավական համակարգում: Այս դեպքում «իրավունքի գերակայությունը» բնական իրավական հայեցակարգում կարող էր ներմուծել որոշակի անորոշություն, իսկ բնական և անօտարելի իրավունքները հասկանալի էին ու որոշակի: Այսպես օրինակ՝ բնական իրավունքի տեսության կանխադրությամբ և պարզ պնդումը հետևյալն է. «Մարդու հանրաճանաչ իրավունքների հիմքը բնական իրավունքն է: ...բնական իրավունքի գաղափարի էությունը հետևյալն է. 1) «գրված իրավունքի»՝ որպես իրավունքի նորմերի ամբողջության հետ գոյություն ունի չգրված՝ բարոյական իրավունք, որը բխում է հենց մարդու էությունից. 2) բնական իրավունքները միշտ չէ, որ համընկնում են օրենսդրությանը. 3) մարդու իրավունքները կազմում են

³ Нерсисянц В. С. *Философия права*, М., 2006, с. 80-81.

բնական իրավունքի նշանակալի մասը: Բնական իրավունքը մարդու բնույթով պայմանավորված իրավունքների ու ազատությունների համակցությունն է. այն ծագել է պետության առաջացումից շատ վաղ»⁴:

Դատողությունների նման տրամաբանական հերթականությունից ուղղակիորեն ակնհայտ է, որ բնական իրավունքի տեսության մեջ իրավունքի գերակայության սկզբունքն անխուսափելիորեն վերածվում է բնական իրավունքների գերակայության սկզբունքի: Համաշխարհային սահմանադրական պրակտիկայում մշակված ու իրավաբանական ամրագրում ստացած մարդու իրավունքների բոլոր սկզբունքները հենց իրավունքի գերակայության սկզբունքի բովանդակային պահանջներն ու տարրերն են:

Իրավունքի գերակայության սկզբունքի հիմնական իմաստը օրենսդրությունն արժեքաբանության ենթարկելն է՝ իրավունքի էության (իդեալի) միջոցով: Բնական իրավունքի տեսության վրա կառուցված և դրականացված մարդու իրավունքների նշանակություններից մեկն էլ այնպիսի չափանիշի, չափորոշիչի ծառայելն է, որի միջոցով պետք է զատվեն պետության իրավական և ոչ իրավական օրենքները⁵: Իրավունքի գերակայության ողջ իմաստը հենց արժեքաբանական գործառույթն է՝ արժևորել երկու հիմնական դրական իրավական ինստիտուտները՝ օրենքները և պետությունը: Բնչպես տեսնում ենք, մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գործառույթները համընկնում են: Հետևաբար դրական իրավական ամրագրում ունեցող բոլոր սկզբունքները, որոնք իրենց ուղղակի բովանդակությամբ վերաբերում են մարդու իրավունքներին, հենց իրավունքի գերակայությունից բխող պահանջներն ու դրույթներն են: Բնական իրավունքի տեսության դիրքերում կանգնած տեսաբաններն ընդունում են, որ «մարդու իրավունքները հանդես են գալիս որպես իրավունքի անհրաժեշտ մաս, նրա գլխավոր բովանդակության արտահայտման որոշակի ձև»⁶: Այսպիսով, իրավունքի գերակայության սկզբունքը ենթադրում է մարդու իրավունքների առաջնայնության սկզբունքը, որն ակնհայտ է բնական իրավունքի տեսության վրա կառուցված իրավական տեսություններում: Հետևաբար սահմանադրական մակարդակում, հասնելով բնական իրավունքից բխող մարդու իրավունքների իրավական ամրագրման, այս տեսությունը և նրա պրակտիկական չարունակեցին պնդել իրավունքի գերակայության սկզբունքի դրական իրավական ամրագրման անհրաժեշտությունը:

Հարց է առաջանում, իսկ ինչպիսին է իրերի դրությունը այն իրավունքի տեսություններում, որոնք կառուցված չեն բնական իրավական դիրքերի վրա, սակայն ընդունում են իրավունքի և օրենքի տարանջատման հայեցակարգը:

⁴ Саидов А. Х. *Общепризнанные права человека*. Под ред. проф. И. И. Лукашука, М., 2002, с. 13-14.

⁵ Сл'и Глухарев Л. И. *Права человека в современном мире (социально-философские основы и государственно-правовое регулирование)*, М., 2003, с. 223.

⁶ Головистикова А. Н. *Права человека*. А. Н. Головистикова, Л. Ю. Грудцина, М., 2006, с. 56.

Փորձենք վերլուծել այս հարցն այդպիսի տեսություններից մեկի՝ Վ. Ներսեսյանցի ազատական իրավաբանական տեսության հիման վրա: Վերջինս, իրավունքի էություն համարելով ձևական հավասարության (իրավահավասարության) սկզբունքը, դրական իրավունքը բնորոշում է հետևյալ կերպ. «Իրավունքը պաշտոնապես սահմանված և պետական պաշտպանությամբ ապահովված իրավունքի նորմերի ամբողջություն է, որը համապատասխանում է ձևական հավասարության սկզբունքին»⁷, այսինքն՝ իրավունքի էությանը: Նույն այդ տեսությունը հիմնավորում է հետևյալ պնդումը. «Իրավունքի գերակայության սկզբունքի հաստատումը ենթադրում է մարդու՝ որպես հոգևոր անձի, որպես հասարակական կյանքի բոլոր ոլորտներում ազատ, անկախ և ինքնավար սուբյեկտի (իրավական, բարոյական, էսթետիկական, կրոնական և այլն) ազատության բոլոր իրավաբանորեն նշանակալի առումների օրենսդրական ճանաչում, ամրագրում և պարտականություն»⁸:

Այսպիսով, ազատական իրավաբանական տեսությունը միանշանակ ընդունում է իրավունքի գերակայության սկզբունքը՝ նրա արտաքին իմաստով, սակայն այս տեսությունն ընդունում է նաև իրավունքի գերակայության սկզբունքի երկրորդ՝ իրավական իմաստը՝ իրավունքի էություն համարելով օրենքից զատ գոյություն ունեցող իրավահավասարությունը, և դրան վերագրում է գերակայություն, որովհետև «օրենքը» դիտարկվում է որպես իրավունքի արտահայտության ձևերից մեկը, էության իրավական երևույթը: «Օրենքի միջոցով իրավական հավասարության սկզբունքը ձևորեն է բերում պետական-իշխանական, համապարտադիր ճանաչում և պաշտպանություն, օրինական ուժ: Լինելով իրավունքի օբյեկտիվորեն պայմանավորված հատկությունների արտահայտման ձև՝ օրենքը դառնում է իրավական օրենք: Իրավական օրենքը նույն ինքը իրավունքն է»⁹:

Ըստ ազատական իրավաբանական տեսության՝ իրավունքի դրականացման իրական գործընթացում իրավունքը օրենքի վերածելու ուղղորդիչ սկզբունքը իրավահավասարության, այսինքն՝ իրավունքի էության գերակայությունն է: Հենց դրանից էլ բխում է օրենքների, սակայն ոչ բոլոր, այլ միայն իրավական օրենքների գերակայությունը:

Ինչ վերաբերում է իրավունքի գերակայության համատեքստում իրավունքի և մարդու իրավունքների հարաբերակցությանը, ապա այս հարցում ազատական իրավաբանական տեսության և բնական իրավունքի տեսության մոտեցումները գրեթե համընկնում են, միայն մեկ տարբերությամբ՝ մեկում մարդու իրավունքների օբյեկտիվ աղբյուրը բնական իրավունքն է, մյուսում՝ իրավահավասարության սկզբունքը՝ որպես

⁷ Нерсисянц В. С. Общая теория права и государства, М., 1999, с. 71.

⁸ Проблемы общей теории права и государства. Под общ. ред. В. С. Нерсисянца, М., 1999, с. 184-185.

⁹ Նույն տեղում, էջ 189:

հավասար չափ և մասշտաբ բոլորի հանդեպ, որպես ազատություն և արդարություն: Ըստ Վ. Ներսեսյանցի, մարդու իրավունքներն իրավունքի բոլոր տիպերի սուբյեկտային-մարդկային ըմբռնումներն են. «Իրավունքն ընդհանրապես և մարդու իրավունքները ոչ թե տարբեր (իրենց էությամբ, գործառնություններով և առավելությամբ) ֆենոմեններ են, որոնք ունեն իրարից անկախ կյանք, այլ միևնույն կարգի և միևնույն տիպի երևույթներ են: Մարդու իրավունքները ամեն մի իրավունքի անհրաժեշտ, անբաժանելի և անխուսափելի բաղադրատարրերն են: Իրավունքն առանց մարդու իրավունքների անհնար է, ինչպես մարդու իրավունքները՝ առանց իրավունքի և իրավունքից դուրս»¹⁰: Հետևաբար ազատական իրավաբանական տեսության վերլուծությունը ցույց է տալիս, որ մարդու իրավունքների սկզբունքները, որոնք կոչված են ապահովելու դրանց գերակայությունը, ի վերջո հենց իրավունքի գերակայության սկզբունքի դրսևորումներ են:

Այսպիսով, կատարված տեսական վերլուծությունը հաստատում է հետևյալը. սահմանադրական զարգացման պատմական օրինաչափությունները նոր ժամանակներում հանգեցրին նրան, որ ներպետական իրավունքը որոշակի պահից գերծ մնաց «իրավունքի գերակայության» սկզբունքի ուղղակի ամրագրումից՝ բավարարվելով միայն օրենքի գերակայության սկզբունքի պաշտոնական դրականացմամբ, դրան սահմանադրական ուժ տալով, սակայն սահմանադրական կարգավորման այդ մասը լրացվեց մարդու իրավունքների զանազան սկզբունքներով, որոնք, ըստ էության, նույնական են իրավունքի գերակայության սկզբունքի հետ:

ВЕРХОВЕНСТВО ПРАВА И ПРАВЪ ЧЕЛОВЕКА

АСАТРЯН А. Л.

Резюме

Верховенство права имеет внешние и внутренние проявления. Внешние проявления обусловлены его приоритетностью в отношении других социальных регуляторов. Развитие системы государственного права, создание новых концепций в юриспруденции, правовой опыт способствовали формированию внутренних проявлений верховенства права, являющих собой дифференциацию права и закона. Официальные правовые доктрины новой эпохи отражают различные подходы к вопросу закрепления верховенства права на уровне конституционного регулирования.

¹⁰ *Տէ՛ւ Երսեսյանց Բ. Ս. Փիլոսոֆիա փրա, Մ., 1997, Տ. 376.*

Позитивистское, нормативистское, легистское правопонимание, не ставя различий между правом и законом, апеллирует к конституционному принципу “приоритета закона”. В теориях права, основанных на подобной точке зрения, принцип “верховенства права”, сохраняя свой первый – внешний смысл, не приобрел второго – чисто правового смысла. Однако конституционные системы, построенные на концепции разделения закона и права, в качестве положений-критериев, обеспечивающих соответствие закона праву, выдвинули и конституционно сформулировали права человека и их принципы. В теории права принцип верховенства права неизбежно трансформируется в принцип верховенства естественных прав, и все принципы, касающиеся прав человека, разработанные и получившие юридическое закрепление во всемирной конституционной практике, являются содержательными требованиями, элементами принципа верховенства права.